

ըստ Տէրունական բանկին «Ծառ ՚ի պտղոյ իւրմէ Շաւ
նաշի» . եւ «Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ» :
Եւ դուք իսկապէս յայտմ հարազատ եւ բարի արմատոյ
վերաբուսեալ՝ ընտիր շառաւիղք եւ բողբոջք նոցին՝
ի դէպ ժամու ծաղկեալ եւ պտղաբերեալ իսկապէս
ցուցիք զարդիւնս առաքինական գործոց ձերոց, զորոյ
քաղցրութիւնն նոքա միայն կարեն գիտել, որոց
կիրթք են ճաշակելքն :

Արդ՝ ոչ այլ ինչ մնայ երկասիրիս երախտագէտ
մտօք փոխարէնս եւ տրիտուրս հատուցանել բարետը-
րութեանց բարեացապարտ աղնուականութեան ձե-
րում, բայց միայն անմոռաց յիշատակաւ նպաստս ա-
ղօթից եւ հայցուածոց ՚ի Արքազան վայրս Տնօրինականաց
Քրիստոսի փրկչին մերոյ, կեալ Զեղ՝ եւ որոց ընդ ձեզ
են՝ անդորր եւ անտրտում ուրախութեամբ յանցաւոր
եւ յառօրեայ կեանս, անմահին եւ մշտնջենաւորին լինել
արժանի երանաւէտ կենաց եւ անթառամ պսակին :

